ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

ՈՐՈՇՈՒՄ N 04/2026-Դ/Վ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 ապրիլի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մարտի 30-ին Սեմյոն Բաբայանի (այսուհետ՝ Դիմող) կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումը (այսուհետ՝ նաև Դիմում) և դրա հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

1. **Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝**

2026 թվականի մարտի 30-ին Հանձնաժողով է մուտքագրվել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի Դիմումը՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի (այսուհետ նաև՝ Նախարար) շահերի բախման կամ անհամատեղելիության պահանջների խախտման դեպքը քննելու և վարույթ հարուցելու վերաբերյալ:

1.1 Դիմողը, վկայակոչել է «Հրապարակ» օրաթերթում 2026 թվականի մարտի 28-ի հրապարակված *«53.4 միլիոն արտոնություն, 25.0 միլիոն դրամաշնորհ՝ նախարարի ամուսնուն»* հոդվածը և մտահոգություն է հայտնել Առողջապահության նախարարության կողմից նախարար Անահիտ Ավանեսյանի մորը պատկանող «Արֆարմացիա» ընկերությունից պետական գնումներ կատարելու առթիվ, միաժամանակ նշել, որ Անահիտ Ավանեսյանն օգնում է նաև ամուսնուն

պատկանող ընկերություններին արտոնյալ դիրք ունենալ շուկայում, մասնավորապես, ստանալ հարկային արտոնություններ և դրամաշնորհներ՝ առանց ինչ-որ հանգամանքի:

1.2 Ըստ Դիմողի՝ հրապարակումը Նախարարի գործունեության ընթացքում առկա կոռուպցիոն ռիսկերի և շահերի բախման ակնհայտ դրսևորումների վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում:

Հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթները, որոնք արգելում են պաշտոնատար անձին իր լիազորություններն օգտագործել ի շահ իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց (ծնող, ամուսին)՝ Դիմողը խնդրել է՝

ա. հարուցել վարույթ՝ պարզելու համար Նախարարի գործողություններում շահերի բախման կամ անհամապատասխանության պահանջների խախտման առկայությունը,

բ. ստուգել, թե արդյո՞ք Նախարարի ընտանիքի անդամների հետ կապված ընկերությունների հաղթանակները մրցույթներում և ստացված արտոնությունները հետևանք են Նախարարի պաշտոնական դիրքի ազդեցության,

1.3 Դիմումով, միաժամանակ, ներկայացվել է առերևույթ կոռուպցիոն հանցագործության փաստերի մասին հաղորդում: Դիմողը գտնում է, որ Նախարարի գործողություններում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) հատկանիշներ: Դիմողը գտնում է նաև, որ պետական միջոցների նմանօրինակ կառավարումը վնասում է պետության հեղինակությանը և խախտում հավասար մրցակցության սկզբունքները:

2. Սույն որոշման համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները.

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու **միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով**:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան

համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (…)

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա,** (…):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: (…)

Օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները: 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

(…)

3) խախտումը կամ շահերի բախման դեպքը.

4) փաստական հանգամանքները, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր).

(…)

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝**

1) **դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.**
2) **դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.**
3) (…)

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն հոդվածով տրված են նաև գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի հասկացությունները:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն.

«1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

2. Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է **որևէ արտոնություն** իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ **կազմակերպություններին**, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ

կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

3. Իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ որոշումը կամ գործողությունը (անգործությունը) ուղղված է ապահովելու արտոնություն պաշտոն զբաղեցնող անձի, նրա հետ փոխկապակցված անձի կամ վերջիններիս անդամակցած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար:»:

Հանձնաժողովը, նախքան Դիմումով ներկայացված հրապարակման ուսումնասիրությունը և Նախարարի գնման գործընթացներին մասնակցելու հանգամանքին անդրադառնալը, հարկ է համարում վկայակոչել «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի իրավակարգավորումը, որի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը և մեկ անձից գնումը: Գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատվել են էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը: Դեղերը (տարբեր դեղամիջոցներ, դեղորայքին և պատվաստանյութերին օժանդակող նյութեր և հարմարանքներ) ընդգրկված են այդ ցուցակում:

Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ով (այսուհետ՝ Կարգ) նախատեսված կարգավորումները:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են **պատվիրատուի ղեկավարը**, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսվում է, որ գնման պայմանագիրը կնքում է պատվիրատուի ղեկավարը: Համաձայն Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ պատվիրատուի ղեկավարը պետական մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս լիազորությամբ գլխավոր քարտուղարի տեղակալը, բացառությամբ (...):

Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 10-րդ կետի համաձայն՝ վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են:

Այսպիսով, Հանձնաժողովը, ուսումնասիրելով Դիմումի հիմք հանդիսացող «ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) վերջին մեկ տարվա ընթացքում ավելի քան 83 միլիոն դրամի պայմանագիր է կնքել Նախարարի մորը պատկանող «Արֆարմացիա» ընկերության հետ» վերտառությամբ հրապարակումը՝, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (ներդրվել է 2017 թվականից) առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Նախարարությունը պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգերին մասնակցել է առնվազն 2017 թվականից: Միայն 2025 և 2026 թվականներին Ընկերությունը տարբեր պատվիրատուների հետ կնքել է 120 գնման պայմանագիր: Նշված ժամանակահատվածում Նախարարությունը, որպես պատվիրատու, Ընկերության հետ կնքել է գնման երեք պայմանագիր (**ՀՀ ԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/14, ՀՀ ԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/48/1 և ՀՀ ԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2**): Երեք դեպքում էլ գնումն իրականացվել է **էլեկտրոնային աճուրդ** (էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը) գնման ընթացակարգով:

Բոլոր դեպքերում Նախարարության անունից պայմանագրերը կնքել է գլխավոր քարտուղարը:

Բացի այդ, Դիմումի հիմք հանդիսացող հրապարակման մեջ նշվել է նաև Նախարարի ամուսնուն պատկանող ընկերություններին սարքավորումների մատակարարման

շրջանակներում 53,4 միլիոն դրամի չափով հարկային արտոնություններ և ավելի քան 25 միլիոն դրամ դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ: Թեմայի առնչությամբ զանգվածային լրատվության միջոցներով նախկինում և վերջին օրերին կատարված հրապարակումների (https://armlur.am/1551314/, https://yerkir.am/hy/article/2026/03/31/309394, https://www.aravot.am/2022/03/24/1255620/) ուսումնասիրությունից Հանձնաժողովը փաստում է, որ ՀՀ պետական բյուջեի (այսուհետ՝ բյուջե) միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն) սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման գործընթացի հետ կապված հիմնական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգ»-ով, որի 4-րդ կետի համաձայն՝ դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է: Դրամաշնորհի տրամադրման պայմանագիրը հաստատվում է պետական մարմնի ղեկավարի կողմից, ով այդ լիազորությունը կարող է վերապահել գլխավոր քարտուղարին:

Դրամաշնորհի տրամադրման պայմանագրերը հաշվառվում են Ֆինանսների նախարարության Armeps/ppcm էլեկտրոնային համակարգի միջոցով, որի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ նշյալ համակարգում ախարարության կողմից կնքված դրամաշնորհների տրամադրման պայմանագրեր չկան:

Ուստի Դիմողի պահանջը՝ շահերի բախման հնարավոր դրսևորումների վերաբերյալ անհիմն է:

Շահերի բախման վերաբերյալ գործող իրավական կարգավորումների և դրանց մեկնաբանությունից բխում է, որ շահերի բախման առկայության արձանագրման համար անհրաժեշտ է մասնավոր շահի առկայություն, որն ազդում կամ կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, և որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել արտոնության ապահովման իր կամ իր հետ փոխկապակցված անձի համար: Հետևապես՝ միայն վերոնշյալ տարրերի համակցության

առկայության դեպքում Հանձնաժողովը կարող է արձանագրել շահերի բախման իրավիճակի առկայությունը:

Պետական կառավարման մարմնում՝ տվյալ դեպքում՝ Առողջապահության նախարարությունում, **նախարարը, ի պաշտոնե, չի հանդիսանում գնման գործընթացում ներգրավված անձ** կամ պայմանագրի կողմ, ինչպես նաև չի ձևավորում գնահատող հանձնաժողովը կամ այլ կերպ մասնակցում գնման գործընթացի կազմակերպմանը:

Լրատվամիջոցների հրապարակումներում հիշատակվող և գնումների Armeps համակարգում առկա գնման պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առողջապահության նախարարության անունից խնդրո առարկա գնման պայմանագրերը կնքվել են գլխավոր քարտուղարի կողմից՝ գնումների ընթացակարգերի վերաբերյալ գործող իրավակարգավորումների պահպանմամբ: Նշված համատեքստում՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Առողջապահության նախարարության կարիքների համար պատվիրվող գնման գործընթացներին Ընկերության մասնակցության առումով նախարարի կողմից շահերի առերևույթ դեպք (իրավիճակ) առկա չէ:

Ի լրումն վերոգրյալի Հանձնաժողովը հարկ է համարում նշել նաև, որ վերջին մի քանի տարիների ընթացքում զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների և դիմումների հիման վրա Նախարարության կողմից կատարվող գնումների գործընթացներին մասնակցության հրապարակումների (https://kizaket.am/news/316759, https://168.am/2021/01/18/1446626.html, https://hetq.am/hy/article/114240, https://www.pastinfo.am/hy/news/2024/01/12/7vo5sfsb9/1697839, https://168.am/2022/10/14/1780938.html, https://168.am/2024/12/27/2147088.html և այլն) վերաբերյալ իրականացվել է ուսումնասիրություն: Վերոնշյալ դեպքերով Հանձնաժողովը Նախարարի շահերի բախման համատեքստում, ուսումնասիրությամբ շահերի խախտման դեպքեր չի արձանագրել:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում վկայակոչել ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ հաստատված «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ մաքսատուրքից ազատելու

արտոնություն ստանալու համար ապրանքներ ներմուծող անձը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում հայտ:

Հայտը Էկոնոմիկայի նախարարություն մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են հայտի մերժման հիմքերը, Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է մաքսատուրքի արտոնության տրամադրման ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ և հայտի հետ ներկայացվում Ֆինանսների նախարարություն, Արդարադատության նախարարություն, Պետական եկամուտների կոմիտե, տվյալ ծրագիրն ընդգրկող տնտեսության ոլորտը համակարգող լիազոր պետական մարմին՝ դիրքորոշման:

Վերոնշյալ մարմինները երեք աշխատանքային օրվա ընթացքում իրենց լիազորությունների շրջանակներում ուսումնասիրում են ներկայացված որոշման նախագիծն ու հայտը և Էկոնոմիկայի նախարարություն ներկայացնում դիրքորոշում նախագծի և հայտի վերաբերյալ:

Էկոնոմիկայի նախարարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, ամփոփելով մարմինների դիրքորոշումները, որոշման նախագիծը ներկայացնում է Վարչապետի աշխատակազմ: Վերջինս որոշման նախագիծն ստանալուց հետո 14 աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է Կառավարության նիստի քննարկմանը:

Համապատասխան որոշման նախագիծն ընդգրկվել է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի նիստում՝ որպես չզեկուցվող հարց:

Կառավարության նիստին, որի ժամանակ տրվել է արտոնությունը, մասնակցել է նաև Անահիտ Ավանեսյանը (https://www.youtube.com/watch?v=0vy1dSN9hFE): Նիստում օրակարգի հաստատումից հետո, որին կողմ է քվեարկել նաև Նախարարը, ընդհանուր փաթեթով քվեարկության են դրվել նիստի չզեկուցվող հարցերը: Նախարարն այս փաթեթի քվեարկությանը ևս մասնակցել է և կողմ քվեարկել:

Հարկ է նշել, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարության անդամները պարտավոր են մասնակցել Կառավարության նիստերին: Նրանք Կառավարության նիստերից կարող են բացակայել վարչապետի համաձայնությամբ: Եթե *վարչապետը գտնում է, որ Կառավարության նիստի օրակարգ ընդգրկելու համար առաջարկվող որևէ հարցի քննարկման անհրաժեշտություն չկա, ապա օրակարգի նախագիծը Կառավարության անդամներին ուղարկելիս նշվում է այդ մասին:*

Տվյալ հարցը Կառավարության նիստում քվեարկվում է առանց քննարկման և զեկուցման, եթե Կառավարության անդամներից որևէ մեկը Կառավարության նիստում դրան չի առարկում: Առարկելու դեպքում հարցը քննարկվում է ընդհանուր կարգով: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ որոշումները և Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Կառավարության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: Կառավարության այլ որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Կառավարության անդամների ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: **Նիստին մասնակցող Կառավարության անդամները պարտավոր են մասնակցել քվեարկությանը: Կառավարության անդամները քվեարկում են կողմ կամ դեմ:** Ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը որոշիչ է:

Ընդ որում, քննարկվող օրենքով կամ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշմամբ հաստատված «Կառավարության աշխատակարգ»-ով նախատեսված չեն Կառավարության անդամների շահերի բախման կառավարմանը վերաբերելի առանձին կարգավորումներ կամ ինքնաբացարկի հիմքեր: Այսինքն, առկա կարգավորումների պայմաններում, Կառավարության անդամը չի կարող չմասնակցել և չքվեարկել Կառավարության նիստում, իսկ բացակայությունը կարող է լինել միայն Վարչապետի թույլտվությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները, Հանձնաժողովն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Նախարարը մասնակցել է Կառավարության նիստին, որի ընթացքում իր ամուսնու մասնակցությամբ առևտրային կազմակերպությանն արտոնություն է տրամադրվել, այնուամենայնիվ, արտոնության տրամադրման փաստացի հիմքը հանդիսացել է Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշումը, իսկ արդեն Կառավարության մարտի 24-ի N 362-Ա որոշմամբ Կառավարությունը, ղեկավարվելով իր՝ 2015 թվականի թիվ 1118-Ն որոշման պահանջով, որոշել է բավարարել «Իբարի» ընկերության հայտը:

Վերոնշյալի համատեքստում համադրելով Կառավարության վերոնշյալ որոշումը, արտոնության տրամադրման կարգը և շահերի բախման օրենսդրական նորմերը, մասնավորապես «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումն առ այն ,որ իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ

որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա(...), ակնհայտ է դառնում, որ Կառավարության սույն որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն, անդրադառնում է անձանց/կազմակերպությունների լայն շրջանակի վրա և չի կրել մասնավոր բնույթ:

Տվյալ դեպքում ներկայացված տվյալներով չի հիմնավորվում, որ նախարարն իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս գտնվել է այնպիսի իրավիճակում, որտեղ առկա է մասնավոր շահի ազդեցություն կամ նման ազդեցության իրական վտանգ: Մասնավորապես, բացակայում են տվյալներ, որ Նախարարն առնչություն է ունեցել համապատասխան որոշումների ընդունման գործընթացին կամ ազդել է դրանց վրա՝ հոգուտ իր ընտանիքի անդամների:

Ըստ այդմ, հաշվի առնելով նաև Հանձնաժողովի 2025 թվականի մշտադիտարկման արդյունքները, համաձայն որոնց՝ Անահիտ Ավանեսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքեր չեն հայտնաբերվել, ինչպես նաև Դիմումով ներկայացված տվյալների գնահատմամբ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով չեն ներկայացվել և որևէ կերպ չեն հիմնավորվել Անահիտ Ավանեսյանի, որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի, անհամատեղելիության պահանջների խախտման հանգամանքներ: Ուստի, Հանձնաժողովն արձանագրում է, որ Անահիտ Ավանեսյանի կողմից օրենքի նշյալ պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ առկա չեն:

Հանձնաժողովն անդրադառնալով Դիմողի՝ պաշտոնատար անձի գործողություններին քրեաիրավական գնահատական տալու և քրեական վարույթ նախաձեռնելու իրավասություն պահանջին, արձանագրում է, որ Հանձնաժողովի իրավասությունները սահմանող օրենքով Հանձնաժողովին պաշտոնատար անձի գործողություններին քրեաիրավական գնահատական տալու և քրեական վարույթ նախաձեռնելու իրավասություն վերապահված չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Դիմումում բարձրացված հարցերը՝ շահերի բախման և անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների մասով առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր, իսկ քրեական վարույթ նախաձեռնելու իրավասություն մասով, պահանջը դուրս է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից, ուստիև Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումի հիման վրա վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի մարտի 30-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ